ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 28.02.2014թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ն.Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ.Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ռ.Մկրտչյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ.Օհանյան ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒՄ

1. Գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ընթացքի մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

2. 2014թ. համայնքների բյուջեների կազմման գործընթացի մասին/ զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

3. Կրոնական կազմակերպությունների կողմից մարզի համայնքներում կատարած կամ կատարվելիք աշխատանքների մասին: /զեկ.՝ ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

4. Համայնքների ղեկավարների աշխատակազմերում հաստիքների կրճատման, համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման և շահագործման, համայնքներում աղբահանության կազմակերպման աշխատանքների կազմակերպման մասին: /զեկ.՝ ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրամական պահանջների վերաբերյալ կայացված որոշումների հարկադիր կարգով կատարման հնարավորությունների մասին: /զեկ.՝ ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

6. Հայտարարություններ

Արագածոտնի մարզում կայացավ մարզխորհրդի նիստ, որին մասնակցեց ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը։Իր ելույթում նա 2013 թվականը հանրապետության և վերջինիս համատեքստում Արագածոտնի մարզի գյուղատնտեսության համար հազվադեպ արդյունավետներից է համարել, անդրադարձել պետական օժանդակման այն ծրագրերին, որոնց, ինչպես նաև մեր գյուղացիների ջանադիր աշխատանքի շնորհիվ է հնարավոր եղել ապահովել նման արդյունքները:

Խոսելով ընթացիկ տարվա խնդիրների մասին, նախարարը լավատեսորեն ասել է, որ հանրապետության Նախագահի հանձնարարությամբ պետական օժանդակման ծրագրերը շարունակական են լինելու, գյուղացին կրկին մատչելի գներով ձեռք է բերելու սերմացու, պարարտանյութ ու դիզելային վառելանյութ, ինչը, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների համագործակցությամբ Հայաստանում իրականացվող ծրագրերի հետ, հնարավոր է դարձնելու կրկնել նախորդ տարվա ձեռքբերումները: Նշված ծրագրերից նա առանձնապես կարևորել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որով մարզի մի շարք համայնքներում հիմնադրված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվները կարճ ժամանակում ապացուցել են իրենց տնտեսական շահավետությունը: Անցյալ տարի ծրագրի շրջանակներում նրանց հատկացվել է 19 տրակտոր և 27 գյուղատնտեսական այլ տեխնիկա: Ընթացիկ տարում նախատեսվում է խնայված միջոցների հաշվին մարզի ևս մի քանի համայնքներ ընդգրկել նշված ծրագրում: Նրանց նույնպես գյուղատնտեսական տեխնիկայի նոր խմբաքանակ է սպասում:

Նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար նախարարը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Թաթուլ և Արագածոտն համայնքների ղեկավարներ Ալբերտ Հարոյանին և Մելսիկ Ղազարյանին:

Մարզի գյուղատնտեսության ևս 10 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

Այնուհետև նախարարը պատասխանեց համայնքների ղեկավարներին հետաքրքրող հարցերին:

Մարզպետ Ս.Սահակյանը իր շնորհակալությունը հայտնեց գյուղատնտեսության նախարարին համագործակցության և մարզում գյուղատնտեսության ոլորտում եղած թերությունների վերացման հարցերում ցուցաբերած աջակցության համար:

Մարզպետը նաև ամփոփեց մարզխորհրդի նիստում քննարկված հարցերը:Դրանք վերաբերում էին գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը, հակակարկտային և մեքենատրակտորային տեխնիկայի նախապատրաստությանը, կուտակային կենսաթոշակային ծրագրի ներդրման գործընթացին, համայնքային բյուջեների կազմմանը և այլն:

1.Յու.Ազատյան-մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ:

---Զեկուցողը ներկայացրեց 2014 թվականին մարզում կատարվելիք գարանան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:Տրվեց տեղեկատվություն անասունների գլխաքանակի հաշվառման, գյուղատնտեսական տեխնիկայի նախապատրաստության,հակակարկտային և մեքենատրակտորային տեխնիկայի նախապատրաստության,ինչպես նաև սերմացուների,դիզելային վառելիքի և պարարտանույթերի պահանջարկի վերաբերյալ:

2.Ն.Գալստյան- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

--- Տրվեց տեղեկատվություն 2014 թվականի բյուջեների կազմման վերաբերյալ:Առաջարկվեց բազային թվերը համապատասխանեցնել պլանայինի հետ և տեղ գտած անճշտությունները ներկայացնել բացված տեսքով:Խոսվեց նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված ամսական բազային եկամտից 5% կուտակային պարտադիր վճարի մասին:

3.Ս.Հովսեփյան- մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ վարչության պետ

--- Զեկուցողը խոսեց համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրման և շահագործման աշխատանքների մասին ,որոնք գտնվում են մարզպետարանի աշխատակազմի մշտական ուշադրության կենտրոնում:

Նշվեց, որ ՏԻՄ օրենքի 54 հոդվածի 10-րդ կետին հանաձայն պետք է ստեղծվեն համայնքների ղեկավարներին կից խորհրդակցական մարմիններ և դրանք կցել ավագանու նիստերի որոշումներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ն.Մովսիսյան- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ

--- «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության հետ համագործակցելու վերաբերյալ: «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ»-ն աջակցում է արոտօգտագործողների կոոպերատիվների (ԱԿ) ստեղծմանը, կայուն զարգացմանն ու կառավարմանը: ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակներում գյուղտեխնիկայի գնման համար ԱԿ-ներից պահաջված 50% համաֆինանսավորման գումարի 30%-ը փոխանցում է կազմակերպությունը, իսկ 20%- ը՝ կոոպերատիվը:

---Հայաստանում Շվեցարիայի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման վերաբերյալ:

2.Ն.Գալստյան- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

--- ՀՀ 2015թ. բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ համայնքներին տրվող մեթոդական ցուցումների փաթեթը համայնքների ղեկավարներին տրամադրելու վերաբերյալ:

3. Ս.Հովսեփյան-- ***մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ վարչության պետ***

--- Ավտոմեքենաները պարտադիր ապահովագրության չներկայացնելու համար վարչական պատասխանատվության ենթարկված քաղաքացիներին տրամադրել պահանջվող տեղեկանքներ՝ գույքահարկի մասով պարտավորությունների կատարման համար:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ